

# «Վեգա Ուորլդ»

սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

---

Կենցաղային էլեկտրատեխնիկական և  
ռադիոտեխնիկական արտադրատեսակների  
թափոնների օգտահանման

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ

ԳՆԱՀԱՏՄԱՆ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Կատարող՝

«Քոնսեկորդ» ՍՊԸ տնօրեն՝



Վ. Թևոսյան



Երևան-2023թ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ	5
2.1. Ազգային իրավական ակտեր	5
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	6
3.1. Ֆիզիկաաշխարհագրական պայմանները	6
3.2. Կլիմայական պայմանները	9
3.3. Օդային ավազան	12
3.4. Ջրային ռեսուրսներ	12
3.5. Հողածածկ	15
3.6. Կենսաբազմազանություն	15
3.7. Մոցիալական պայմանները	17
3.7.1. Մասիս	18
4. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՋՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ	19
4.1. Ջրոյական տարբերակ	19
4.2. Քննարկվող տարբերակներ	20
5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	21
6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏԱՌԻՄ	27
6.1 Ռիսկերի գնահատում	27
6.1 Օդի աղտոտում	27
6.2 Ջրօգտագործում և ջրահեռացում	27
6.3 Թափոնների կառավարում	27
6.4 Մոցիալական ազդեցությունը	28
6.5 Աղմուկ և թրթռում	28
6.6 Սանիտարապաշտպանիչ գոտի	29
6.7 Կուսակցատիվ (հավաքական) ազդեցություն	30
7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ	

ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	30
8. ԱՂՏՈՏՈՒՄՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	31
<b>8.1. Ռիսկերի գնահատում.....</b>	<b>31</b>
<b>8.2. Արտակարգ իրավիճակներ .....</b>	<b>31</b>
9. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ.....	33
Բնապահպանական կառավարման պլան .....	35
Օգտագործված գրականության ցանկը .....	38

# 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ներկայում ՀՀ տարածքում գործում է կենցաղային տեխնիկական միջոցների վաճառքի մեծ ցանց: Էլեկտրատեխնիկական և ռադիոտեխնիկական կենցաղային ապրանքները, կորցնելով իրենց սպառողական հատկությունները, որպես կանոն, լավագույն դեպքում հայտնվում են կենցաղային աղբավայրերում, սակայն շատ դեպքերում նաև թաղամասերի տարածքներում, ճանապարհների երկայնքով և անկազմակեր աղբանոցներում:

«ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (ՍՊԸ) նախատեսում է իրականացնել կենցաղային էլեկտրատեխնիկական և ռադիոտեխնիկական արտադրատեսակների թափոնների հավաքում, օգտահանում և ժամանակավոր պահեստավորում:

Բնակչությունից և կազմակերպություններից ընդունելով քանեցված էլեկտրատեխնիկական և ռադիոտեխնիկական սարքեր և սարքավորումներ, նախատեսում է տեսակավորել դրանք՝ մի մասը վաճառել որպես երկրորդային հումք, իսկ մնացածը ժամանակավոր պահեստավորել հետագա օգտահանման կամ վնասազերծման նպատակով:

Գործունեությունն ունի նաև զգալի բնապահպանական արդյունք, քանի որ թույլ կտա կանխել շրջակա միջավայրի հնարավոր աղտոտումը մետաղներով և այլ վտանգավոր նյութերով:

«ՎԵԳԱ ՈՒՈՐԼԴ» ՍՊԸ իրավաբանական հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Թումանյան 4/1, սպասարկման կենտրոնի հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Սեբաստիայի փողոց 141/8 շենք (Մալաթիա-Սեբաստիա վարչ. շրջան):

## Ընկերության գործունեության ոլորտը՝

- Մանրաձախ և ապառիկ վաճառք, աուդիո-վիդեո և կենցաղային տեխնիկա և էլեկտրոնիկա, բջջային հեռախոսներ, համակարգչային տեխնիկա և աքսեսուարներ, շինարարական գործիքներ, լուսային սարքեր, կահույք, մանվածքեղեն, գորգեր, սպասք, խոհանոցային պարագաներ, խաղալիքներ, պատի ժամացույցներ, գրենական պիտույքներ և այլն
- Կահույքի արտադրություն
- Մանվածքեղենի արտադրություն
- Տրանսպորտային ծառայություններ և լոգիստիկա
- Կենցաղային տեխնիկայի և էլեկտրոնիկայի վերանորոգում և երաշխիքային սպասարկում
- Ծանր ավտոտրանսպորտային միջոցների սպասարկում:

Սույն հաշվետվությունը կազմված է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ կողմից 27.09.2022թ. ներկայացված ՏԱ61 տեխնիկական առաջադրանքի պահանջների հիման վրա:

Աշխատանքում ներկայացված են տեղանքների բնակլիմայական և սոցիալական ելակետային տվյալները:

Հաշվետվությունում նկարագրված են գործունեության բնութագրերը, տեխնիկական միջոցները:

Դիտարկվել են այլընտրանքային տարբերակները, ներառյալ զրոյական տարբերակը:

Գնահատվել են նախատեսվող գործունեության բնապահպանական և սոցիալական ռիսկերը, որոնց վերլուծության արդյունքում մշակվել են բացասական ազդեցությունը կանխող կամ նվազեցնող միջոցառումներ:

Աշխատանքների պատշաճ կազմակերպման նպատակով մշակվել է բնապահպանական կառավարման պլան: Մշակված միջոցառումների արդյունավետությունը վերահսկելու համար ներկայացվել է մշտադիտարկումների (մոնիթորինգի) ծրագիր:

## 2. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

### 2.1. Ազգային իրավական ակտեր

Կայանի շահագործման գործունեությունը կազմակերպվում և իրականացվում է հաշվի առնելով բնապահպանության բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորություններով և ՀՀ օրենսդրության (օրենքների և ենթաօրենսդրական ակտերի) սահմանված վերաբերելի պահանջները:

Դրանցից հիմնականներն են (կատարված փոփոխություններով և լրացումներով)`

1. ՀՀ Հողային օրենսգիրքը (02.05.2001թ.),
2. ՀՀ Ջրային օրենսգիրքը (04.06.2002թ.),
3. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքը (21.06.2014թ),
4. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքը (11.10.1994թ.),
5. «Թափոնների մասին» ՀՀ օրենքը (24.11.2004 թ.),

6. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգիրքը (06.12.1985թ.),
7. «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (11.04.2005թ.),
8. «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը (30.05.2001թ.),

Նախագծային աշխատանքների և պլանավորման ժամանակ հիմք են հանդիսացել հետևյալ ենթաօրենսդրական ակտերը.

9. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 6 մայիսի 2002թ. N 138 հրամանը՝ «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում N2–III – 11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին»,
10. «Հայաստանի Հանրապետությունում վտանգավոր թափոնների գործածության գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 30.06.2003թ-ի N 121-Ն որոշում
11. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 17 մայիսի 2006 թվականի N533-Ն հրամանը՝ «Աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) հիգիենիկ նորմերը ՀՆՆ 2.2.4-009-06 հաստատելու մասին»:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված դասակարգումների, նախատեսվող գործունեությունը դասվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակներին և ենթակա է փորձաքննություն՝ երկու փուլով:

### **3. ՆԱԽԱՏԵՄՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ**

#### **3.1. Ֆիզիկաաշխարհագրական պայմանները**

Մասիս քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի կենտրոնական մասում՝ Հրազդան գետի ստորին հոսանքի ավազանում: Հյուսիսից սահմանակից է Արարատի մարզի Այնթապ, Նոր Խարբերդ, արևմուտքից՝ Սայաթ Նովա, հարավից՝ Նորամարգ, արևելքից՝ Մարմարաշեն, Նոր Կյուրին գյուղերին:


Մարզկենտրոն Արտաշատից գտնվում է 20 կմ դեպի արևմուտք, իսկ քաղաքամայր Երևանից՝ 17 կմ դեպի հարավ:

Մասիս համայնքի տարածքով հոսում է Հրազդան գետը, հարավում՝ պետական սահմանի երկարությամբ՝ Արաքս գետը:

Բնակավայրի մակերևույթը հարթավայրային է, իսկ քաղաքի միջին բարձրությունի ծ.մ.-ից կազմում է 854 մ, մակերեսը՝ 5.7 կմ<sup>2</sup>:

Տարածքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Գործունեության տարածքը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի արդյունաբերական հանգույցում՝ Մասիսի կայարան Սայաթ-Նովայի փողոց 30 հասցեում՝ «Վեգա Ուորլդ» ՍՊԸ արտադրական տարածքում:



Նկար 1. Իրադրային սխեմա



### *Գեոմորֆոլոգիա*

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, էրոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

#### *Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները*

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքը ոչ բարենպաստ է սեյսմիկ ազդեցության ժամանակ:

Համաձայն ՀՀՇՆ II-6.02-2006 «Սեյսմակայուն շինարարության նախագծման նորմեր»- ի և ՀՀ տարածքի սեյսմիկ գոտիավորման քարտեզի՝ տարածքը գտնվում է սեյսմիկ երրորդ գոտում: Գրունտների հնարավոր սեյսմիկ արագացումները կազմում են  $A = 0.4g$  և ունի 9 և ավելի բալ սեյսմիկ ռիսկայնության աստիճան:

### **3.2. Կլիմայական պայմանները**

Ընդհանուր առմամբ համայնքի կլիման չոր ցամաքային է: Ամառները շոգ են, տևական՝ 4-5 ամիս: Հուլիսին միջին ջերմաստիճանը  $+20$ -ից մինչև  $+32$  աստիճան է, առավելագույնը՝  $+41$  աստիճան: Բնորոշ են լեռնահովտային քամիները: Ձմեռները ցուրտ են: Հունվարի միջին ջերմաստիճանը  $-6$ -ից մինչև  $-10$  աստիճան է, նվազագույնը՝  $-30$  °C: Հաստատուն ձնածածկույթը ամեն տարի չէ որ ձևավորվում է: Գարունը կարճատև է, բնորոշ են անկայուն եղանակները և համեմատաբար առատ տեղումները<sup>1</sup>:

Տարեկան տեղումների քանակը կազմում է 200-300 մմ, (առավելագույնը՝ ապրիլ մայիս ամիսներին):

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախատեսվող գործունեության տարածքին ամենամոտ գտնվող կայանը Արտաշատի օդերևութաբանական կայանն է, այդ իսկ պատճառով դիտարկվել և օգտագործվել են Արտաշատի օդերևութաբանական կայանի տվյալները, որի դիտարկումների արդյունքները ներկայացվում են ստորև բերված աղյուսակների տեսքով:

Տարվա հաշվարկային կլիմայական պարամետրերը բերված են 3.1 – 3.4 աղյուսակներում:

<sup>1</sup> <https://masiscity.am/>

Աղյուսակ 3.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը

Օդերևութաբանական կայան	Օդերևութաբանական կայանի բարձրությունը, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C0												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Արտաշատ	829	-3.6	-0.9	5.6	12.7	17.5	21.5	25.3	24.8	19.8	13.0	6.0	-0.6	11.8	- 29	43

Աղյուսակ 3.2. Օդի հարաբերական խոնավությունը

	Բարձրությունը ծովի մակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջին տարեկան	Միջին ամսական ժ. 15-ին	
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12		ամենացուրտ ամիս	ամենատաք ամիս
Արտաշատ	829	78	73	63	58	59	54	51	52	57	68	73	79	64	64	32

Աղյուսակ 3.3. Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Օդերևութաբանական կայան	Տեղումների քանակը միջին ամսական / օրական առավելագույն, մմ												Ձնածածկույթ, մմ			
	Ըստ ամիսների											տարեկան	Առավելագույն տասնօրյակային բարձրությունը (սմ)	Տարվա ձնածածկույթի օրերը	Չյան մեջ ջրի առավելագույն քանակը	
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11					12
Արտաշատ	18	18	27	36	40	25	11	6	10	22	24	17	254	40	36	46
	18	20	32	36	43	34	27	22	28	36	31	25	43			

Աղյուսակ 3.4. Քանու պարամետրերը

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, (հՊա)	Մամիսներ	Կրկնելիություն, % /միջին արագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անհողմությունների խնկեխումբում %	Միջին ամսական աստուածումում/վ	Միջին տարեկան աստուածումում/վ	Ուժեղ քամիներով (Ո 15մ/վՈ՞ օրեռեռ. քանակ)	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ "n" տարիների			
			Հյուսիսային (Հս)	Հյուսիսարևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավարևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավարևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիսարևմտյան (ՀսԱրմ)					20	50	100	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	
Արտաշատ	920.2	Հունվար	7	8	10	20	12	10	15	18	88	0.3	0.4	7	21	24	26	
			1.7	1.7	2.7	3.1	2.4	2.0	2.2	1.7								
		Ապրիլ	4	9	12	27	13	8	13	14	14	74						0.6
			1.7	1.8	2.1	2.8	2.5	2.8	2.8	2.6								
		Հուլիս	8	7	9	16	9	9	18	24	24	80						0.4
			1.7	1.9	1.7	2.0	2.0	2.0	2.7	2.3								
		Հոկտեմբեր	7	12	12	19	8	10	16	16	16	85						0.3
			1.6	1.5	2.1	2.0	1.5	2.1	2.4	2								

### 3.3. Օդային ավազան

Մասիս քաղաքի օդային ավազանի աղտոտվածությունը ձևավորվում է ավտոտրանսպորտային միջոցների, բնակչության կենսագործունեության և սակավաթիվ արդյունաբերական ձեռնարկությունների ազդեցության արդյունքում:

Մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածությունը հանրապետության տարածքում վերահսկվում է ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետ՝ ՊՈԱԿ) կողմից: Սակայն, Մասիս քաղաքում չկան ՊՈԱԿ-ի դիտակետեր և բնակավայրի օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշները որոշվում են հաշվարկային եղանակով՝ ըստ բնակչության թվաքանակի:

Համաձայն ՊՈԱԿ-ի հաշվարկային տվյալների, Մասիս քաղաքի օդային ավազանում ֆոնային աղտոտվածությունը կազմել է՝

- ածխածնի օքսիդ՝ 0.8 մգ/մ<sup>3</sup>,
- ազոտի երկօքսիդ՝ 0.015 մգ/մ<sup>3</sup>,
- ծծմբային անհիդրիդ՝ 0.05 մգ/մ<sup>3</sup>,
- անօրգանական փոշի՝ 0.3 մգ/մ<sup>3</sup>:

### 3.4. Ջրային ռեսուրսներ

Տարածաշրջանի հիմնական ջրային զարկերակը Արաքս գետն է:

Արաքսը հանրապետության խոշորագույն գետն է: Անդրասահմանային գետ է, որի ավազանն ընդգրկում է Թուրքիայի, Հայաստանի, Իրանի և Ադրբեջանի տարածքը:

Ունի 1072 կմ երկարություն, որից 200 կմ կազմում է Հայաստանի և Թուրքիայի սահմանը<sup>2</sup>: Հայաստանի գետերի մեծագույն մասը (որոնց ավազանները, միայն վերցված, կազմում են հանրապետության տարածքի 73.5 տոկոսը) պատկանում է Արաքսի ավազանին: Արաքսը վաղնջական ժամանակներից հանդիսացել է հայոց քաղաքակրթության կարևոր բնօրրաններից մեկը:

---

<sup>2</sup> <https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D6%80%D5%A1%D6%84%D5%BD>

Արաքսի սնումը խառն է, հորդացումը՝ մարտից հունիս, առավելագույնը՝ մայիսին: Առաջին հորդացումը՝ մարտ–ապրիլ, կապված է ցածրադիր վայրերի ձնհալքի և գարնանային անձրևների հետ, երկրորդը (ավելի բուռն)՝ մայիս–հունիս, լեռների ձնհալքի հետ: Ամենացածր մակարդակները լինում են հուլիս–օգոստոսին և ձմռանը: Երրորդ թույլ հորդացումը աշնանային անձրևներից է: Հորդացման ժամանակ Արաքսը մեծ ավերածություններ է առաջացնում, հատկապես Արարատյան, Միլիի ու Մուղանի դաշտերում: Հորդացումների ժամանակ Արաքսը միջին և ստորին հոսանքներում հաճախակի փոխում է իր հունը՝ միշտ շարժվելով դեպի հարավ:

Ներկայացվող տարածքից մինչև Արաքսի մոտակա հատվածը հեռավորությունը կազմում է 7.9 կմ:

Արաքս գետի 7 դիտակետից վերցված ջրի փորձանմուշներում որոշված ցուցանիշներից, ըստ ձկնատնտեսական նորմերով գնահատման, գերազանցվել են թթվածնի քիմիական պահանջարկի, ամոնիում, նիտրիտ, սուլֆատ իոնների, ցինկի, պղնձի, քրոմի, նիկելի, մանգանի, վանադիումի, երկաթի, ալյումինի և սելենի ՍԹԿ-ները:

2021 թվականին Արաքս գետի 3 դիտակետում՝ ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսներին իրականացվել են հատակային նստվածքների ուսումնասիրություններ: Հատակային նստվածքներում որոշված ցուցանիշների մի մասը բերված է աղյուսակ 3.5-ում<sup>3</sup>:

---

<sup>3</sup> <http://www.armmonitoring.am/>

Աղյուսակ 3.5 Արաքս գետի հասակային նստվածքների մոնիթորինգի արդյունքները 2021թ.

Կոնցենտրացիա, գ/կգ	Ագարակ քաղաքից 2 կմ հարավ (29) AMS-1)						Ագարակ քաղաքից 2.5 կմ ք. հարավ- արևելք (30) AMS-2)		Մեղրի գետի թափման կետից ներքև (AMS-3)					
	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Մայիս	Հունիս	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր
Ալյումին	4.3116	38.6772	9.8934	14.6020	2.4941	3.1704	17.0928	28.8415	10.4014	50.5767	24.5696	7.9153	4.2742	48.8004
Երկաթ	13.4357	23.5259	31.1836	21.9034	13.6432	16.6353	14.2060	54.9026	14.4303	41.4705	47.5058	13.2998	31.7219	27.5371
Մանգան	0.8389	1.1040	0.9501	1.2193	0.6695	1.0480	1.0417	1.2632	0.3407	0.5578	1.1026	0.4334	0.3117	0.5204
Նիկել	0.1618	0.1921	0.2142	0.2238	0.1080	0.1584	0.1951	0.3053	0.0432	0.0489	0.2448	0.0563	0.0358	0.0701
Պղինձ	0.0392	0.0635	0.0521	0.0558	0.0374	0.0593	0.1563	0.1442	0.7846	0.9688	0.2758	1.0605	1.2403	0.5693
Արսեն	0.0106	0.0217	0.0168	0.0142	0.0086	0.0125	0.0230	0.0228	0.0067	0.0159	0.0208	0.0086	0.0151	0.0144
Մոլիբդեն	0.0009	0.0008	0.0006	0.0010	0.0014	0.0016	0.0049	0.0029	0.0377	0.0405	0.0077	0.0435	0.0588	0.0355

### 3.5. Հողածածկ

Նախատեսվող գործունեության տարածքին հիմնականում բնորոշ են հետևյալ տիպերը.

- բաց շագանակագույն խճաքարային տեղ-տեղ ցեմենտացած հողային տիպեր
- առանձին տեղամասերում հողերը ներկայացված են նաև դարչնագույն հողերի կրազերծված ենթատիպով:

Անմիջապես ներկայացվող տարածքում բաց հողային մակերես կամ բուսաշերտ պարունակող մասեր չկան: Այստեղ չի իրականացվել որևէ գործունեություն, որի արդյունքում հողային ռեսուրսները կարող էին աղտոտվել:

### 3.6. Կենսաբազմազանություն

Մասիս քաղաքի և դրա մերձավոր տարածքների կենսաբազմազանությունը ձևավորվել է ինչպես սեփական աշխարհագրական դիրքի, բնակլիմայական, ռելիեֆային և լանդշաֆտային պայմանների, այնպես էլ մերձավոր տարածքների ֆլորիստական շրջանների բուսական և կենդանական աշխարհների ազդեցության ներքո:

Բուսական աշխարհը սերտ կապված է բնակլիմայական, մորֆոլոգիական, աշխարհագրական և այլ պայմանների հետ, որոնք հստակեցնում են և կանոնավոր կերպով տարանջատում տարբեր տիպի ֆլորաների սահմանները: Համաձայն Ս. Դալի կենդանական աշխարհի տարածման սահմանները ավելի անորոշ են ու աղոտ, ավելի լայն և դժվար են սահմանազատվում շնորհիվ իրենց շարժունակության և ապրելաձևի առանձնահատկությունների (բնակալում, նստակյաց կամ չվող կենսակերպ, արտազոնալ բնակատեղերի առատություն):

Անմիջապես գործունեության տարածքում և մերձակայքում չկա բնական բուսածածկ և չկան վայրի կենդանիներ:

#### 3.6.1. Բուսական աշխարհ

Մասիսի տարածաշրջանում բուսական աշխարհը ներկայացված է Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային տափաստանային զոնայի տարածքներին բնորոշ

բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են հատիկա և հատիկատարազգի ներկայացուցիչները:

Մարդու գործունեության զարգացմանը զուգընթաց (հողերի գյուղատնտեսական օգտագործում, անասունների արածացում, տնտեսական գործունեություն և այլն) որպես կանոն կրճատվում է լանդշաֆտային զոնայի տեսակների ինչպես կազմը, այդպես էլ քանակը՝ ընդհուպ մինչև որոշ տեսակների իսպառ վերացումը:

Արարատի մարզում բուսականությունը կիսաանապատային է և անապատային:

Կիսաանապատայինից առկա են բնական բուսածածկի հետևյալ տիպերը՝ Օշինդրա-էֆեմերային, մասնակցությամբ՝ *Artemisia fragrans* Willd., *Kochia prostrata* (L.) Schrad., *Capparis spinosa* Willd., *Ceratoides papposa* Botsch. Et Ikonn., *Atraphaxis spinosa* L., *Rhamnus pallasii* Fisch. et Mey., *Tanacetum argyrophyllum* (C. Koch) Tzvel., *Poa bulbosa* L. *Bromus*, *Aegilops*, *Eremopyrum*, *Alyssum*. *Aeloropus littoralis* (Gouan) Parl.

Անապատայինից առկա են բնական բուսածածկի հետևյալ տիպերը՝ Հալոֆիլ, մասնակցությամբ՝ *Salsola ericoides* Bieb., *S. Dendroides* Pall., *S. Nitraria* Pall., *Halocnemum strobilaceum* (Pall.) Bieb.

Դեղաբույսերից տարածված են՝ Տուղտ Դեղատու, Տուղտ հայկական (*Althaea officinalis*, *A. armeniaca*), Իշավարունգ սովորական (*Ecballium elaterium*), Տորոն ներկատու (*Rubia tinctorum*), Սպանդ սովորական (*Peganum harmala*), Փշատենի նեղատերև (*Elacagnus angustifolia*), Ալոճենի մուգ արնագույն և այլ տեսակներ (*Crataegus atrosanguinea*):

Հազվադեպ և անհետացող բուսատեսակներից են՝ Գազ տարօրինակը (*Astragalus paradoxus*), Կոմուխ Օշեի (*Inula aucherana*):

Անմիջապես ներկայացվող տարածքը գտնվում է Մասիս քաղաքի արտադրական գոտում, որտեղ չկա բնական բուսածածկ, համապատասխանաբար նաև ՀՀ կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ:



### 3.6.2. Կենդանական աշխարհ

Մասիսի տարածաշրջանում ողնաշարավոր կենդաններից հանդիպում են՝ շնագայլ, եղեգնակատու, վայրի խոզ, գյուրգա, ջրասամույր, միջերկրածովյան կրիա, ճահճակուղբ, կաքավ, նապաստակ, խեցգետին, մշկամուկ, անողնաշարավորներից՝ անատամ:

Հազվադեպ և անհետացող կենդանատեսակներից են՝ Սովորական երկարատև չղջիկ (*Miniopterus schreibersi* Kuhl), ծական ասիական (*Sabanejewia aurata*):

Անմիջապես ներկայացվող տարածքը գտնվում է Մասիս քաղաքի արտադրական գոտում, որտեղ չկան վայրի կենդանիների ապրելավայրեր, համապատասխանաբար նաև ՀՀ կարմիր գրքում գրանցված կենդանիներ:

### 3.6.3. Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Տարածաշրջանի բնական էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանությունը, բնականոն զարգացումը, վերարտադրությունն ու կայուն օգտագործումը ապահովելու նպատակով տարբեր ժամանակահատվածներում շրջակա տարածքներում կազմակերպվել են մի շարք բնության հատուկ պահպանվող տարածքներ.

«Խոսրովի անտառ» պետական արգելոցը,

«Խոր Վիրապ» պետական արգելավայրը:

Նշված պահպանվող տարածքները բավականաչափ հեռու են նախատեսվող աշխատանքների իրականացման վայրերից և չեն կրի որևէ ազդեցություն այդ աշխատանքների իրականացման արդյունքում:

Անմիջապես ներկայացվող տարածքը գտնվում է Մասիս քաղաքի արտադրական գոտում, որտեղ չկան վայրի կենդանիների ապրելավայրեր, ինչպես նաև մակերևութային ջրային ռեսուրսներ:

### 3.7. Սոցիալական պայմանները

Սույն գործունեության ազդեցությունը կարող են կրել Մասիս քաղաքը և Սայաթ-Նովա գյուղը:

### 3.7.1. Մասիս

Մասիս քաղաքային համայնքը գտնվում է ՀՀ Արարատի մարզում, Հրազդան գետի ձախ ափին, Երևանից 14 կմ հարավ, իսկ մարզկենտրոն Արտաշատից՝ 20 կմ արևմուտք հեռավորության վրա:

Համայնքը հյուսիսից սահմանակից է Արարատի մարզի Այնթապ, արևմուտքից՝ Սայաթ-Նովա, հարավից՝ Նորամարգ, արևելքից՝ Մարմարաշեն, Նոր Կյուրիին գյուղերին:

Տարածքը երեք կողմից շրջապատված է արտադրական կազմակերպություններով, արևմտյան կողմից գտնվում են Սայաթ-Նովա գյուղի առանձնատները: Հեռավորությունը մոտակա առանձնատնից կազմում է 180 մ:

Մասիսում տեղակայված է Երևանը սպասարկող խոշոր երկաթուղային հանգույց:

Ըստ վիճակագրական կոմիտեի տվյալների 2021 թվականի հունվարի 1-ի դրությամբ Մասիսի մշտական բնակչությունը կազմում է 20667 մարդ<sup>4</sup>:

Մասիս քաղաքի արդյունաբերական գոտում՝ երկաթուղու կայարանի մերձակայքում գործում են մի շարք արդյունաբերական կազմակերպություններ, պահեստներ և բազաներ:

### 3.7.2. Սայաթ Նովա

Մակերես՝ 8.8կմ<sup>2</sup>

Բնակչություն՝ 2 140

Գյուղ Մասիսի տարածաշրջանում: Մարզկենտրոնից գտնվում է 20 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Նեճիլի Ներքին, Նեճիլի Ստորին, Նեջերլու Ներքին, Նեջլի Ներքին, Ներջլու Ներքին անվանումները: Սայաթ-Նովա է վերանվանվել 1978 թ-ին:

Գյուղն ընկած է Հրազդան գետի ձախ ափին, Արարատյան դաշտում: Ծովի մակարդակից ունի 827 մ բարձրություն: Կլիման չոր խիստ ցամաքային է: Ձմեռները սկսվում են դեկտեմբերի կեսերին, հունվարյան միջին ջերմաստիճանը

---

<sup>4</sup> [https://www.armstat.am/file/Map/MARZ\\_03.pdf](https://www.armstat.am/file/Map/MARZ_03.pdf)

տատանվում է -30-ից -50 °C: Ամառը տևական է՝ մայիսից մինչև հոկտեմբեր, օդի միջին ամսական ջերմությունը հասնում է 24-ից 26 աստիճան, իսկ առավելագույնը՝ 42 աստիճան: Հաճախ լինում են խորշակներ, որնք զգալի վնաս են հասցնում գյուղատնտեսությանը: Մթնոլորտային տարեկան տեղումների քանակը 250-300մմ է: Բնական լանդշաֆտները կիսանապատներ են, որոնք ռոտզման ընթացքում վեր են ածվել կուլտուր-ռոտզելի լանդշաֆտի: Ագրոկլիմայական տեսակետից համայնքն ընկած է բացարձակ ռոտզման գոտում:

Գյուղն ունի դպրոց, գրադարան, մանկապարտեզ, բուժկետ, կապի հանգույց:

Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են շուրջ 496 հա: Համայնքի հողերի հիմնական մասն օգտագործվում են որպես վարելահողեր՝ զբաղեցնելով մոտ 194 հա: Ունի պտղատու և խաղողի այգիներ: Զբաղվում են այգեգործությամբ, խաղողագործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ: Մշակում են ջերմասեր բանջարաբուստանային, հացահատիկային, կերային կուլտուրաներ: Համեմատաբար ընդարձակ մակերես են զբաղեցնում արոտավայրերը՝ շուրջ 78 հա: Կան խոտհարքեր: Զբաղվում են կաթնամսատու անասնապահությամբ, թռչնաբուծությամբ:

Արդյունաբերություն չունի: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում է ռոտզման ջրի հիմնախնդիրը, գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը<sup>5</sup>:

## **4. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔՆԵՐԸ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԶՐՈՅԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ**

### **4.1. Զրոյական տարբերակ**

Զրոյական կամ առանց գործողության տարբերակ նշանակում է, որ ներկայացվող գործունեությունը չի իրականացվում, կենցաղային տեխնիկական տեղափոխվում է կենցաղային աղբավայրեր կամ հայտնվում է քաղաքների և գյուղերի ընդհանուր տարածքներում: Չեն ստեղծվում նոր աշխատատեղեր, սույն

---

<sup>5</sup> <http://ararat.mtad.am/about-communities/150/>

ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսվող սոցիալական ծրագրերը չեն իրականացվում:

#### 4.2. Քննարկվող տարբերակներ

Քննարկվել են երկու տարբերակ.

1. Անմիջապես կենցաղային տեխնիկայի ընդունման ցանցի խանութներում հանվում են պիտանի մասերը, մնացածը տեղափոխվում է մոտակա կենցաղային աղբավայր:

Այս տարբերակի առավելությունները՝

- այն քիչ ծախսատար է,
- չի պահանջում մեծածավալ տրանսպորտային տեղափոխություններ:

Թերությունները՝

- օգտագործված կենցաղային տեխնիկայի մեծ մասը հիմնականում տեղափոխվում է կենցաղային աղբավայր, այդ թվում նաև կենցաղային մարտկոցները, որոնք վտագ են ներկայացնում շրջակա միջավայրի համար:

2. Ամբողջ հանրապետության տարածքում հավաքվում է սպառողական հատկությունները կորցրած կենցաղային տեխնիկան, որը ենթակա չէ վերանորոգման, տեղափոխվում է Մասիսի արտադրական տարածք, որտեղ իրականացվում է ընդունված կենցաղային տեխնիկական միջոցների քանդում, ապամոնտաժում, օգտահանում, իսկ փոքր կենցաղային մարտկոցները հանվում են և ժամանակավոր պահվում հատուկ առանձնացված սենյակում:

Այս տարբերակի թերություններ են՝

- ավելի ծախսատար է,
- պահանջում է մեծածավալ տրանսպորտային տեղափոխություններ,
- շահագործման ծախսեր, ընդ որում սկզբնական շրջանում առանց որևէ շահույթի:

Առավելությունները՝

- էականորեն կրճատվում է կենցաղային աղբավայրեր

տեղափոխվող մնացորդների ծավալը, համապատասխանաբար ճնշումը այդ աղբավայրերի վրա

- բացառվում է փոքր կենցաղային մարտկոցների տարածումը շրջակա միջավայրում:

Քննարկելով ներկայացված առավելությունները և թերությունները, ընտրվել է երկրորդ տարբերակը, այդ թվում նաև զգալի բնապահպանական առավելությունների պատճառով:

## 5. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

### 5.1. Ընդհանուր տեղեկատվություն

Վեգա խանութների ցանցը մանրածախ և ապառիկ եղանակով իրականացնում է վաճառք՝ աուդիո-վիդեո, կենցաղային տեխնիկա և էլեկտրոնիկա, բջջային հեռախոսներ, համակարգչային տեխնիկա և արքեսուարներ, շինարարական գործիքներ, լուսային սարքեր, կահույք, մանվածքեղեն, գորգեր, սպասք, խոհանոցային պարագաներ, խաղալիքներ, պատի ժամացույցներ, գրենական պիտույքներ և այլն: Այս բոլորը ապրանքատեսակները ժամանակի ընթացքում կորցնում են իրենց սպառողական հատկությունները և մեծամասամբ վերածվում են թափոնի: Ընդ որում դրանք կարող են պարունակել վտանգավոր նյութեր: Ուստի խիստ անհրաժեշտ է կանխել այդ վտանգավոր նյութերի տարածումը կենցաղում կամ շրջակա միջավայրում:

«Վեգա Ուորլդ» ընկերությունը նախատեսում է Մասիս քաղաքի արտադրական տարածքում կազմակերպել նշված ապրանքատեսակների թափոնների ընդունում, պահեստավորում և օգտահանում: Տարածքը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի արդյունաբերական գոտում՝ Մասիս կայարան Մայաթ-Նովայի փողոց 30 հասցեում:

Տարածքը երեք կողմից շրջապատված է արտադրական կազմակերպություններով, արևմտյան կողմից գտնվում են Մայաթ-Նովա գյուղի առանձնատները: Հեռավորությունը մոտակա առանձնատնից կազմում է 180 մ: Նախատեսվող շինությունը ներկայում չի օգտագործվում: Այստեղ նախատեսվում է իրականացնել վերանորոգման աշխատանքներ:

Տարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 2.85հա: Տարածքը պատկանում է քաղաքացի Յուրի Աֆրիկյանին և «Վեգա Ուորլդ» ընկերության կողմից

օգտագործվում է վարձակալական հիմունքներով (վարձակալության պայմանագրի պատճեն կցվում է):

Վարձակալված տարածքի նպատակային նշանակությունը՝ արտադրական նշանակության (տես՝ կցված վկայականը):

Նախատեսված շինությունը մեկ հարկանի է, մակերեսը կազմում է 112.1 ք.մ., նպատակային նշանակությունը՝ արտադրական:

Օգտագործված կենցաղային տեխնիկայի հավաքումը կիրականացվի ընկերության խանութների ցանցի միջոցով, որի համար կօգտագործվեն ձեռնարկության կազմում շահագործվող 20 հատ բեռնատար և կիսաբեռնատար մեքենաներ: Այդ մեքենաները թափոնները կտեղափոխեն Մասիսի արտադրական տարածք (խանութների ցանկը տես ստորև):

1. ՀՀ, ք. Երևան, փ. Սեբաստիա 141/8 (սպասարկման կենտրոն)
2. ՀՀ, ք. Երևան, փ. Սեբաստիա 143
3. ՀՀ, ք. Երևան, Գայի պողոտա 16 (Մեզամոլ Արմենիա)
4. ՀՀ, ք. Երևան, Թումանյան 2,4
5. ՀՀ, ք. Երևան, Սայաթ Նովա 33
6. ՀՀ, ք. Երևան, փ. Ռուբինյանց 15/5
7. ՀՀ, ք. Երևան, Տիգրան Պետրոսյան 25/5
8. ՀՀ, ք. Երևան, Էրեբունի 18
9. ՀՀ, ք. Երևան, Կոմիտաս 60/2
10. ՀՀ, ք. Գյումրի, Շիրակացու 56գ
11. ՀՀ, ք. Գյումրի, Սայաթ Նովա 9/9ա
12. ՀՀ, Արարատի մարզ, գ. Մասիս,

Արտաշատյան 18/1
13. ՀՀ, ք. Սպիտակ, Ս. Ավետիսյան 9ա
14. ՀՀ, ք. Սիսիան, Սիսական 33
15. ՀՀ, ք. Տաշիր, Երևանյան 174
16. ՀՀ, ք. Կապան, Շահումյան 32/6
17. ՀՀ, ք. Հրազդան, Անդրանիկի պող. 662
18. ՀՀ, ք. Վանաձոր, Զաքարյան 1ա
19. ՀՀ, ք. Մեղրի, Զ. Անդրանիկի 2/13
20. ՀՀ, ք. Իջևան, Անկախության 14
21. ՀՀ, ք. Գավառ, Բոշնաղյան 4

## 5.2. Տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ

Ընդամենը նախատեսվում է ամսական ընդունել մինչև 1000 հատ խոշոր չափերի բանեցված ապրանքատեսակներ, այդ թվում՝ սառնարաններ, հեռուցստացույցեր, լվացքի մեքենաներ, փոշեկուլներ, ժամացույցներ և այլն:

Ներկայացված ապրանքատեսակները, իրենց սպառողական հատկությունները կորցնելով, դասվում են սպառման թափոնների շարքին, որոնք ներառված չեն ՀՀ բնապահպանության /ներկայում՝ շրջակա միջավայրի/ նախարարի 26 հոկտեմբերի 2006թ. N 342-ն հրամանով հաստատված «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՅԱՑՈՂ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ) ԵՎ ՍՊԱՌՄԱՆ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» հրամանի հավելվածի 1- 4 դասի թափոնների ցանկում:

Ընդունվող բանեցված ապրանքները կարող են պարունակել հարյուրավոր բաղադրիչներ և գործնականում անհնարին է դրանք թվարկել: Մինևույն

Ժամանակ ՀՀ շրջակա միջավայրի նախարարի 27.05.2022թ. N167-Ն «Հայաստանի Հասնրապետության բնապահպանության նախարարի 2006 թվականի N342-Ն հրամանում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» որոշման մեջ թվարկված են ռադիոտեխնիկական, օպտիկական և էլեկտրատեխնիկական ապրանքներից առաջացած թափոնները, որոնք գործնականում ամբողջությամբ կարող են պարունակվել ընդունվող թափոններում: Նշված հրամանը կցվում է սույն հաշվետվությանը:

Թափոնները կշռվելու են տարածքում առկա կշեռքի միջոցով և տեղադրվելու են արտադրական մասնաշենքի պահեստային մասում: Սպասարկող անձնակազմը տեսակավորում է թափոնները հետևյալ ընթացքով.

– Էլեկտրատեխնիկական և ռադիոտեխնիկական սարքերից հանվում են հետագա օգտագործման պիտանի մասերը, որոնք տեղափոխվում են սպասարկման կենտրոն՝ համապատասխան ապրանքատեսակների վերանորոգման նպատակով:

– Օդորակիչներից և սառնարաններից հանվում է են սառնագենտները /ֆրեոններ/, որոնք լցվում են հատուկ տարողությունների մեջ: Ֆրեոնների դատարկումը իրականացվում է հատուկ պոմպերի միջոցով, որոնք ապահովում են դատարկման հերմետիկությունը: Տարողությունները հերմետիկ փակվում են և տեղափոխվում Երևանի տեխնիկական սպասարկման կենտրոն, որտեղ օգտագործում են վերանորոգվող սառնարաններում և օդորակիչներում՝ ֆրեոնների պակասը լրացնելու համար: Ֆրեոնների հետ աշխատանքները իրականացվում են ՀՀ շրջակա միջավայրի Օգոնի ազգային կենտրոնում ուսուցում անցած մասնագետների կողմից:

– Մետաղական մասերը կտրատվում, առանձնացվում, բրիկետավորվում և տեղափոխվում են մետաղական ջարդոնի պահեստ, որտեղից առաքվում /վաճառվում/ են համապատասխան լիցենզիա ունեցող ընկերություններին: Անմիջապես գործունեության տարածքի հարևանությամբ գտնվում է նման կազմակերպության հիմնական բազան:

Նախատեսվում է պահեստի մոտ՝ ծածկի տակ, տեղադրել հիդրավլիկ մամլիչ: Ըստ նախնական ուսումնասիրության նախատեսվում է տեղադրել ՌԴ արտադրության «ЧистоГрад» ընկերության (կամ համարժեք տեխնիկական բնութագրերով այլ տեսակի) մամլիչ, որի տեխնիկական ցուցանիշները բերված են սույն հաշվետվության հետ ներկայացված տեխնիկական զեկույցում:



– Պլաստիկ նյութերը հանվում են, տեսակավորվում և ըստ տեսակների ուղարկվում մանրացման տեղամաս, որտեղ հատուկ աղացում մանրացվում են, լցվում պարկերի մեջ և տեղափոխվում են պլաստիկ նյութերի պահեստ, որտեղից առաքվում են համապատասխան լիցենզիա ունեցող ընկերություններին:

Նախատեսվում է շինության մեջ տեղադրել պլաստիկ նյութերը մանրացնող սարք: Ըստ նախնական ուսումնասիրության նախատեսվում է տեղադրել չինական արտադրության HT-FSJ75 տեսակի պլաստիկ նյութերի աղաց (կամ համարժեք տեխնիկական բնութագրերով այլ տեսակի), որի տեխնիկական ցուցանիշները բերված են սույն հաշվետվության հետ ներկայացված տեխնիկական զեկույցում:

– Փայտյա իրերը հանվում և տեղափոխվում են համապատասխան պահեստ, որտեղից առաքվում են փայտամշակման արհեստանոցներ:

– Թղթյա և ստվարաթղթյա թափոնները տեղափոխվում են թղթի պահեստ, որտեղից առաքվում /վաճառվում/ են համապատասխան լիցենզիա ունեցող ընկերություններին:

– Կենցաղային փոքր մարտկոցները (батарейки) հավաքվում են հատուկ պահեստում, որտեղ պահվելու են մինչ հանրապետությունում ստեղծվեն հատուկ պոլիգոններ կամ ներդրվեն մարտկոցների վերամշակման տեխնոլոգիաներ:

– Մնացած մասերը տեղափոխվում են Մասիսի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր:

Օգտահանման արդյունքում ստացված երկրորդական հումքը նույնպես դասվում է թափոնների շարքին: Դրանց քանակները և դասերը ներկայացված են ստորև՝ աղյուսակ 5.1-ում:

Աղյուսակ 5.1. Գործունեության ընթացքում առաջացող թափոնները

Դասիչը ըստ 342-ն հրամանի հավելվածի	Թափոնատեսակի անվանումը	Սպասվող քանակը, տ/տարի	Կիրառումը
35310301 01 01 3	Չտեսակավորված պղնձի ջարդոն	2 – 2.5	Վաճառք լիցենզավորված ընկերություններին

35120111 01 00 4	Չտեսակավորված պողպատ պարունակող թափոններ (այդ թվում՝ պողպատի փոշի)	12 - 18	Վաճառք լիցենզավորված ընկերություններին
35310111 01 00 4	Չտեսակավորված ալյումին պարունակող թափոններ (այդ թվում՝ ալյումինի փոշի)	2 – 2.5	Վաճառք լիցենզավորված ընկերություններին
31400818 13 01 3	Կինեսկոպի ապակե ջարդոն	1 – 1.2	Վաճառք լիցենզավորված ընկերություններին
31400816 01 00 4	Աղտոտված ապակե ջարդոն	3 - 4	Վաճառք լիցենզավորված ընկերություններին
57101600 01 00 4	Պոլիվինիլքլորիդի և դրա հիմքով փրփրապլաստի թափոններ	3 – 4	Վաճառք լիցենզավորված ընկերություններին
57109900 01 00 4	Կարծրացած տարասեռ պլաստմասսաների խառնուրդների թափոններ	8 - 10	Վաճառք լիցենզավորված ընկերություններին
-	Փայտ	4 - 5	Վաճառք կահույքագործերին

Նշված քանակները նախնական հաշվարկների արդյունքում են որոշվել, գործունեության ընթացքում դրանք կարող են փոխվել:

Գործունեությունը կազմակերպելու համար սկզբնական փուլում պահանջվելու են 10 աշխատակից: Հիմնականում անձնակազմը համարվելու է տեսակավորող բանվորներով, լինելու են նաև երկու օպերատոր մամիչի և մանրացուցիչի սպասարկման համար:

Հաշվապահություն, գրասենյակ կամ այլ սպասարկող անձնակազմ չի նախատեսվում, քանի որ Վեգա Ուորլդ ընկերության Մասիսի պահեստները ունեն բոլոր անհրաժեշտ ծառայությունները:

Հետագայում, եթե թափոնների հոսքը ավելանա, անձնակազմը կարող է հասնել մինչև 15 – 20 աշխատողի:

## **6. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԳՆԱՀԱՏԱՈՒՄ**

### **6.1 Ռիսկերի գնահատում**

Նախատեսվող գործունեության հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերը կապված են մետաղական և պլաստիկ մասերի հետ աշխատելու անհրաժեշտության, ինչպես նաև կենցաղային մարտկոցներում պարունակվող քիմիական նյութերի հետ:

#### **6.1 Օղի աղտոտում**

Կենցաղային էլեկտրատեխնիկական և ռադիոտեխնիկական արտադրատեսակների թափոնների հավաքման, օգտահանման և ժամանակավոր պահեստավորման ընթացքում վնասակար նյութերի արտանետումներ չեն նախատեսվում:

#### **6.2 Ջրօգտագործում և ջրահեռացում**

Տարածքում առկա են բոլոր ենթակառուցվածները: Ջուրը մատակարարվում է քաղաքային ջրատարից և կենցաղային կեղտաջրերը լցվում են քաղաքային կոյուղու ցանց համաձայն «Վեոլիա ջուր» ՓԲԸ ընկերության կողմից ջրամատակարարման, ջրահեռացման պայմանագրի:

#### **6.3 Թափոնների կառավարում**

Վեգա ընկերության կողմից իրականացվող ամբողջ գործունեությունը հիմնված է բանեցված կենցաղային տեխնիկայի օգտահանման վրա: Համաձայն «Թափոնների մասին» ՀՀ օրենքի թափոն են համարվում արտադրության կամ սպառման ընթացքում գոյացած հումքի, նյութերի, արտադրանքի և այլն, մնացորդներ, որոնք կորցրել են իրենց սկզբնական սպառողական հատկությունները:

Մինևույն ժամանակ օգտահանման ընթացքում ևս առաջանալու են տարբեր բնույթի թափոններ, որոնցից 5-րդ՝ անվնաս դասի թափոնները տեղափոխվելու են կենցաղային աղբավայրեր, իսկ մի մասը օգտահանվելու է, բացառությամբ մարտկոցների, որոնք հավաքվելու և պահեստավորվելու են

հատուկ առանձնացված սենյակում, մինչ այդ հարցի տեխնիկական և գիտական ողջամիտ լուծումը:

#### **6.4 Սոցիալական ազդեցությունը**

*Սոցիալական պայմանների կանխատեսվող փոփոխությունները:*

Բանեցված կենցաղային տեխնիկայի օգտահանումը գործնականում չունի բացասական սոցիալական ազդեցություն, սակայն ունի զգալի դրական էֆեկտ: Դրանցից են՝

- ❖ բանեցված, օգտագործման համար ոչ պիտանի կենցաղային տեխնիկայի հավաքում, բացառելով բնակչության կողմից դրանց տեղափոխումը աղբավայրեր,
- ❖ հինը նորով փոխանակաման հնարավորություն՝ ապահովելով դրանց ձեռքբերման ծախսերի նվազում
- ❖ կենցաղային աղբավայրերի բեռնվածության նվազեցում
- ❖ նոր աշխատատեղերի ստեղծում
- ❖ ընկերության աջակցությունը Մասիս քաղաքի սոցիալական ծրագրերին:

Ինչպես նշվել է վնասակար նյութերի արտանետումներ, արտադրական կեղտաջրեր, աղմուկի մակարդակի ավելացում, ինչպես նաև վտանգավոր թափոններ չեն առաջանում: Ուստի բնակչության առողջության վրա բացասական ազդեցություն չի լինի:

#### **6.5 Աղմուկ և թրթռում**

ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է N2-III-11.3՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» սանիտարական նորմերով: Բնակավայրերի համար աղմուկի սահմանված թույլատրելի մակարդակը ցերեկային ժամերի համար կազմում է 55 դԲ (A), կամ ֆոնային մակարդակի ոչ ավել քան 3 դԲ (A) ավելացում:

Նշված գործունեությունը չի ուղեկցվում լրացուցիչ աղմուկի առաջացմամբ, հետևաբար հարակից տարածքների բնակչության և գործունեությունը ապասարկող անձնակազմի վրա աղմուկի հնարավոր ազդեցությունը բացակայում է:

ՀՀ-ում ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆԸ «ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԹՐԹՈՒՄԱՆ (ՎԻԲՐԱՑԻԱՅԻ) ՀԻԳԻԵՆԻԿ ՆՈՐՄԵՐԸ» ՀՆ N 2.2.4-009-06 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ սանիտարական նորմերով: Սույն նորմերը սահմանում են թրթռման (վիբրացիայի) դասակարգումը, նորմավորվող չափորոշիչները, աշխատատեղում թրթռման (վիբրացիայի) սահմանային թույլատրելի մակարդակներն ու բնակելի և հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) թույլատրելի մակարդակները: Սահմանային թույլատրելի մակարդակն աշխատատեղերում դա այն մակարդակն է, որը աշխատանքային գործունեության ընթացքում չի առաջացնում առողջական վիճակի շեղումներ և մասնագիտական հիվանդություններ:

Նորմերի կատարման հսկողությունն իրականացվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության մարմինների կողմից: Թրթռաարագության (վիբրոարագության) մակարդակը որոշվում է գործիքային չափման միջոցով:

Քանի որ տարածքում բացակայում է թրթռում (վիբրացիա) առաջացնող աղբյուրը, հետևաբար անձնակազմին թրթռման փոխանցումը կամ անհանգստություն պատճառելը բացառվում է:

## 6.6 Սանիտարապաշտպանիչ գոտի

Սանիտարապաշտպանիչ գոտիների չափերը սահմանվում են CH 245 – 71 ստանդարտով, սակայն նման կարգի գործունեության համար դասակարգում այդ ստանդարտում չկա և նախատեսվող գործունեության համար սանիտարապաշտպանիչ գոտի չի պահանջվում:

Բոլոր դեպքերում գործունեությունը նախատեսվում է իրականացնել Մասիս քաղաքի արտադրական տարածքում, որտեղ մոտակա բնակելի գյուղը՝ Սայաթ Նովա գյուղն է, և հեռավորությունը մոտակա առանձնատնից կազմում է 180 մ:

## 6.7 Կումուլյատիվ (հավաքական) ազդեցություն

Նախատեսվող գործունեությունը գործնականում չունի ազդեցություն շրջակա միջավայրի վրա, համապատասխանաբար հավաքական ազդեցություն նույնպես չի կարող լինել:

## 7. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Շրջակա միջավայրի վրա հնարավոր տնտեսական վնասի գնահատումն իրականացվում է ըստ շրջակա միջավայրի բաղադրիչների: Տնտեսական վնասը հաշվարկվում է համաձայն ՀՀ կառավարության 27.05.2015 N 764-Ն որոշման:

Հնարավոր տնտեսական վնասը հաշվարկվում է՝

$$ՎՏ = ՀԱԳ + ՋԱԳ + ՕԱԳ ,$$

որտեղ՝

ՎՏ-ն հնարավոր տնտեսական վնասն է դրամային արտահայտությամբ,

ՀԱԳ-ն հողային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության հետևանքով (բնական միջավայրի աղտոտում, բնական ռեսուրսների աղքատացում, էկոհամակարգերի քայքայմանը կամ վնասմանը հանգեցնող շրջակա միջավայրի բացասական փոփոխություններ) պատճառ- ված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 92-Ն որոշման համաձայն:

ՋԱԳ-ը ջրային ռեսուրսների վրա տնտեսական գործունեության ուղղակի և անուղղակի ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2003 թվականի օգոստոսի 14-ի N 1110-Ն որոշման համաձայն:

ՕԱԳ-ն մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության հետևանքով պատճառված վնասի ազդեցության արժեքային գնահատումն է, որը հաշվարկվում է ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի N 91-Ն որոշման համաձայն:

Ինչպես նշվել է վերը բերված բաժիններում, ներկայացված գործունեության ընթացքում չեն առաջանում վնասակար նյութերի արտանետումներ,

արտադրական կեղտաջրեր և չի պահանջվում նոր հողատարածք, համապատասխանաբար տնտեսական վնաս չի հաշվարկվում:

## **8. ԱՂՏՈՏՈՒՄՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

### **8.1. Ռիսկերի գնահատում**

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ բնապահպանական և սոցիալական ռիսկերը հիմնականում կապված են՝

- տրանսպորտային տեղոփոխությունների,
- էլեկտրատեխնիկական և ռադիոտեխնիկական սարքերում պարունակվող կենցաղային մարտկոցների հետ,
- մետաղների մասերի հանման և մամլման ընթացքում աշխատակիցների աշխատանքի ընթացքում հնարավոր վնասվածքների հետ:

Թվարկված գործընթացների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով մշակվել են բնապահպանական, սոցիալական միջոցառումներ և բնապահպանական կառավարման պլան:

### **8.2. Արտակարգ իրավիճակներ**

Նախատեսվող գործունեության ժամանակ հնարավոր են վթարային իրավիճակներ, ինչպես նաև բնական աղետներ և անբարենպաստ օդերևութային պայմաններ: Բոլոր հնարավոր դեպքերում շրջակա միջավայրի լրացուցիչ աղտոտումը կանխելու կամ հնարավոր չափով նվազեցնելու համար շահագործող ընկերությունում մշակված է գործողությունների ծրագիր, որը ներառում է ստորև ներկայացված միջոցառումները.

#### *Արտադրական վթարներ*

Նախատեսվող գործունեության ընթացքում վթարներ հնարավոր են մամլիչի և աղացի անսարքության դեպքում: Այդ նպատակով նախատեսվում են.

- սպասարկող անձնակազմը հրահանգավորվում է այդ սարքավորումների վտանգների մասին,

- սպասարկող անձնակազմը ապահովված է անհատական պաշտպանության միջոցներով, այդ թվում՝ սաղավարտներ, արտահագուստ, ձեռնոցներ:

*Անբարենպաստ օդերևութաբանական պայմաններ*

Օդերևութաբանական անբարենպաստ պայմանները դրանք օդային ավազանում ստեղծվող այնպիսի պայմաններ են, որոնք նպաստում են վնասակար նյութերի կուտակմանը մթնոլորտի գետնամերձ շերտում:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների ժամանակահատվածում (քամու արագության նվազման, անհողմության, մառախուղի առաջացման դեպքերում) ցրման գործընթացների դանդաղեցման պատճառով հնարավոր են վնասակար նյութերի գետնամերձ կոնցենտրացիաների զգալի բարձրացումներ:

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների առկայությունը որոշվում է պատասխանատու աշխատողների կողմից՝ վիզուալ եղանակով:

Վիզուալ եղանակով՝ օդերևութաբանական պայմանները անբարենպաստ համարելու վերաբերյալ կայացրած որոշումը անհրաժեշտ է ստուգել մոտակա՝ օդերևութաբանական կայան հարցումի միջոցով:

Ընդունված են անբարենպաստ օդերևութաբանական պայմանների 3 կատեգորիաներ: Նորմատիվ ակտերով դրանց հստակ չափորոշիչները բացակայում են: Ըստ կատեգորիաների տարբերակումը կատարվում է հետևյալ ընդհանուր սկզբունքների հիման վրա.

- I կատեգորիա՝ քամու արագության նվազում
- II կատեգորիա՝ անհողմություն, չոր եղանակ
- III կատեգորիա՝ անհողմություն, թանձր մառախուղ

Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների դեպքում պետք է իրականացվեն ներքոհիշյալ միջոցառումները՝

- կրճատել տրանսպորտային տեղափոխումները,
- հետաձգել մնացորդների աղբավայրերերում տեղադրման գործընթացները:

*Հրդեհային անվտանգություն*



- Ա. Տարածքում գտնվող հրդեհավտանգ հանգույցները պետք է համալրված լինեն հրդեհային ավտոմատ սարքերով, որոնք վերահսկում են արդյունաբերական հրապարակում հրդեհի յուրաքանչյուր բռնկում և հրդեհի հայտնաբերման դեպքում միացնում է հրդեհի մեկուսացման համակարգը:
- Բ. Բոլոր այն էլեկտրական սարքավորումները, որոնք չունեն ավտոմատ սարքեր, ապահովված կլինեն ձեռքի կրակմարիչներով:
- Գ. Պատասխանատու անձը ամբողջ տարածքում անց է կացնում տեսչական ստուգում՝ որպես օրվա աշխատանքային պլանի մի մաս:
- Դ. Հրդեհի ժամանակ կհոսանքազրկվեն բոլոր էլեկտրական սարքերը, կմիացվի հակահրդեհային ջրի համակարգը, անձնակազմը կտեղափոխվի անվտանգ վայր:

Արտակարգ իրավիճակներ

Բնական աղետների (երկրաշարժ, սողանքներ, ջրհեղեղ և այլն), ինչպես նաև տեխնոլոգիական վթարների ժամանակ թափոնների օգտահանման տեղամասի աշխատանքը դադարեցվում է, հոսանքազրկվում են բոլոր էլեկտրական սարքերը, անձնակազմը շտապ տեղափոխվում է անվտանգ վայր:

Երևույթների և իրավիճակի մասին անմիջապես տեղեկացվում են արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության մարզային ստորաբաժանման պատասխանատուները և Մասիսի քաղաքապետարան:

**9. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ**

Մշտադիտարկումների իրականացման հիմնական նպատակն է ստեղծել տեղեկատվություն միջավայրի փոփոխությունների մասին: Ներկայացվող գործունեության բնապահպանական ռիսկերը բերված են սույն հաշվետվության 8-րդ գլխում և ելնելով այդ ռիսկերից և դրանց մեղմացման համար մշակված միջոցառումների արդյունավետության վերահսկման պահանջներից մշտադիտարկումները պետք է ներառեն հետևյալ գործողությունները.

- տրասնպորտային երթևեկության ժամանակացույցի ստուգում՝ ըստ գրանցամատյանների,
- թափոնների շարժի պարբերական ստուգում ըստ

- գրանցամատյանների,
- աղբավայր տեղափոխվող մնացորդների կազմի և ծավալների ստուգում՝ պատահական այցերի միջոցով,
  - օգտահանված երկրորդային հումքի տրամադրման փաստաթղթերի ստուգում՝ լիցենզիաների և պայմանագրերի, հաշվապահական հաշվետվությունների և այլ հավաստող նյութերի շրջանակներում,
  - կենցաղային մարտկոցների պահեստավորում հատուկ հատկացված սենյակում, որի մուտքը կունենան միայն համապատասխան ուսուցված և հրահանգավորված աշխատակիցներ:

### Բնապահպանական կառավարման պլան

<i>Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի</i>	<i>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները</i>	<i>Առաջարկվող մեղմացնող միջոցառումները</i>	<i>Միջոցառումների պատասխանատուն</i>	<i>Միջոցառումների ծախսերը, հազ.դրամ</i>
Բանեցված էլեկտրատեխնիկական և ռադիոտեխնիկական ապրանքատեսակների ընդունում	ա/ Մթնոլորտային օդի աղտոտում  բ/Թափոնների կառավարում	Պարբերաբար ստուգել և անհրաժեշտության դեպքում կարգաբերել ավտոտրանսպորտային միջոցների շարժիչները  Բոլոր թափոնները պետք է կշռվեն, գրանցվեն հատուկ մատյաններում և տեղափոխվեն արտադրական շինության տեսակավորման տեղամաս  Թափոնների տեսակավորումը իրականացնել միայն համապատասխան վայրում  Հանված կենցաղային մարտկոցներն անմիջապես տեղափոխել հատուկ հատկացված սենյակ, գրանցել մատյանում և հանձնել պատասխանատու աշխատողին  Կենցաղային մարտկոցների սենյակը պետք է լինի փակի տակ և մուտքը թույլատրվի միայն պատասխանատու անձանց  Օգտահանված մասերը անմիջապես տեղափոխել համապատասխան պահեստ կամ վերամշակման տեղամասեր՝ մամլիչ և աղաց	«Վեգա Ուորլդ» ՍՊԸ անձնակազմ  «Վեգա Ուորլդ» ՍՊԸ անձնակազմ  «Վեգա Ուորլդ» ՍՊԸ անձնակազմ  «Վեգա Ուորլդ» ՍՊԸ անձնակազմ  «Վեգա Ուորլդ» ՍՊԸ անձնակազմ	480.0  Շահագործման ծախսեր  Շահագործման ծախսեր  Շահագործման ծախսեր  Շահագործման ծախսեր

<i>Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի</i>	<i>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները</i>	<i>Առաջարկվող մեղմացնող միջոցառումները</i>	<i>Միջոցառումների պատասխանատուն</i>	<i>Միջոցառումների ծախսերը, հազ.դրամ</i>
	<p>գ/ Աշխատանքի անվտանգություն, աշխատանքային պայմաններ</p>	<p>Կենցաղային թափոնները, ըստ Մասիսի քաղաքապետի գրության, տեղափոխվում են Մասիս քաղաքի համայնքային աղբավայր:</p> <p>Բոլոր տրանսպորտային տեղափոխությունները իրականացնել ըստ նախապես մշակված և հաստատված շամանակացույցի</p> <p>Աշխատակազմը պետք է ունենա խմելու ջրի և զուգարանների հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ:</p> <p>Տարածքում պետք է լինեն առաջին օգնության բժշկական արկղիկներ :</p> <p>Աշխատակազմը պետք է ապահովվի արտահագուստով և անձնական անվտանգության անհրաժեշտ միջոցներով:</p> <p>Անվտանգության սարքավորումների օգտագործումը պետք է ուսուցանվի, վերահսկվի և պարտադրվի:</p> <p>Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը պետք է նախատեսի վերահսկողություն, հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում:</p>	<p>«Վեգա Ուորլդ» ՍՊԸ անձնակազմ</p> <p>«Վեգա Ուորլդ» ՍՊԸ անձնակազմ</p> <p>«Վեգա Ուորլդ» ՍՊԸ անձնակազմ</p> <p>«Վեգա Ուորլդ» ՍՊԸ անձնակազմ</p> <p>«Վեգա Ուորլդ» ՍՊԸ անձնակազմ</p> <p>«Վեգա Ուորլդ» ՍՊԸ անձնակազմ</p>	<p>Շահագործման ծախսեր</p> <p>Շահագործման ծախսեր</p> <p>Շահագործման ծախսեր</p> <p>40.0</p> <p>Շահագործման ծախսեր</p> <p>Շահագործման ծախսեր</p>

<i>Նախատեսվող գործունեությունը ըստ փուլերի</i>	<i>Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները</i>	<i>Առաջարկվող մեղմացնող միջոցառումները</i>	<i>Միջոցառումների պատասխանատուն</i>	<i>Միջոցառումների ծախսերը, հազ.դրամ</i>
		<p>Տարածքում պետք է լինեն հրդեհային անվտանգության պարագաներ՝ կրակմարիչներ, բահեր, ձայնային և լուսային ահազանգման ավտոմատ սարքեր</p> <p>Բարձր լարման տեղամասերում պետք է տեղադրվեն նախազգուշացնող վահանակներ</p>	<p>«Վեգա Ուորլդ» ՍՊԸ անձնակազմ</p> <p>«Վեգա Ուորլդ» ՍՊԸ անձնակազմ</p>	<p>Շահագործման ծախսեր</p> <p>Շահագործման ծախսեր</p>

Ընդամենը բնապահպանական միջոցառումների տարեկան ծախսերը կկազմեն՝ 520.0 հազ.դրամ:

## Օգտագործված գրականության ցանկը

1. СН 245 – 71. Санитарные нормы проектирования промышленных предприятий
2. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
3. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям. ОНД – 84 – Н
4. “Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգ” հաստատված ՀՀ Կառավարության 2005թ. հունվարի 25-ի N 91 – Ն Որոշմամբ
5. Долгосрочное прогнозирование уровня и возможных отрицательных последствий загрязнения атмосферы, Обнинск 1984г.
6. РД 52.04.186-89. Руководство по контролю загрязнения атмосферы. ГК СССР по гидрометеорологии
7. European Environment Agency. EMEP/EEA air pollutant emission inventory guidebook 2013. NFR: 1.A.1 Energy industries. SNAP: 01 Combustion in energy and transformation industries. 1.A.1.a — Public electricity and heat production